

բրեւ հաւատարիմ ու հանճարեղ խորհրդական մարդ մը, երբ Սուլթան Մահմուտ ի խնդիր էր այդպիսի անձնաւորութեան մը: Իբրեւ արքունի ճարտարագետ՝ մեծ էր իր անունն և զօրծը Օսմանեան մայրաքաղաքին մէջ, և իր գործաւորներն ու երկրորդականները լեզէնն կը կազմէին, որոնց կը մարդասիրէր ու կը կենակցէր ալ մտերմաբար՝ առանց նուաստանալու:

Իր տունն ալ միշտ հինաւուրց զուարթ հիւրասիրութեամբ կը պատուէին ժամանակին մարդիկը՝ աշխարհական, գրապէտ ու արուեստագէտ, ինչպէս այս քաց հիւրասիրութիւնն ապա ցոյց տուաւ նաեւ ճարտարպետականներուն համարակալ գրապետն Օտեան (Եսզըճի) Պօղոս ազան:

Գրիգոր ամիրայ Պալեանի շինուածպետութեամբ կառուցուած են՝ Սէրայ—Պուռնուի հին պալատը¹, Տուժապահճէի ու Զրաղանի այժմու պալատներուն նախորդ փայտաշէն պալատները Պէյլէրպէյիի հին փայտաշէն Պալատը Պէլկրատի Պէնտերը, նաեւ Սելիմիյէ (Հայտար փաշայի) ընդարձակ զօրանոցն և ուրիշ զօրանոցներ ու նովանոցներ, որոնց մէկ քանին կը կենան դեռ, Պուլիս Եանկըն քէօշիւն ու Թոփ հանէի բարձրագոյնէթ մզկիթը: Ինք է այժմառացունոզը Պալեանց անունին և անոնց մէջ հզած է առաջին ամիրան, որ ձայն ունեցած է պատրիարքական ու տոնմային զօրծերու ալ մէջ, ուր ժրացած է ջերմաւնգաբար և պաշտպան կեցած է խեղճերու, վանքերու և վարդապետներու: Անգամ մըն ալ սխալ հասկըցողութեամբ մը տարագիր ալ դացած է Տարսոն և Կեսարիա ու տեղէն ընտիր ասպուխտի մը շնորհիւ, զոր Ղազէզ բարեխօսաբար ընծայած էր Վեհ: Սուլթան Մահմուտի ի դիմաց Պալեան Գրիգորի, ազատած է կարճ ատենէն ու Եղիա եպիսկոպոսի հետ Պուլիս դարձած:

Գրիգոր ամիրան հաստատած էր իր բնակութիւնն Սկիւտար Պիւլպիւլ Տէրէյի բլուրին առաջին սարահարթին վրայ, ուր կ'երեւի այժմիկ հոսադարեան կիսաւեր սօսին և որ նախ իր շնորհիւն տաած է Պիւլպիւլ-Գրիգոր անունը. վասն զի ամիրան սիրահար ըլլալով ստիակի

1. Որ սյրեցաւ 19րդ դարու կէսէն ստղիմ: